

ԻՐԱՅՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
" " վեցամսեայ 6 " "
Արտատպարանի " տարեկան 14 " "
" " վեցամսեայ 7 " "
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Նախակ դրամ եռալը դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐՆԱ)
Редакция на вѣстникъ Редакция du journal
„Иравункъ“ „Iravouнк“
ВАРНА (България) VARNА (Bulgarie)

Խմբագրութեան ողորդող գրութիւն
էս լին ղրկուիլ եւ յարմար դաստիարակ-
ները վիճակը կը հրատարակուին անորո-
շովիւն կամ մասամբ:
Խմբագրութեան տղը 20 ասկիւն երե-
կին անկի անգամներու համար 20 0/0
գնդը կը լինի. փոխարեւը կանխիկ:

ԻՐԱՅՈՒՆՔԻ Դ. ՏԱՐԵՇՐԶԱՆԸ

“ԻՐԱՅՈՒՆՔ” յառաջիկայ տարին պիտի հրատարակուի չորսամբ երկու անգամ՝ աւելի մեծադիր ծաւալով
և հայերէն ու պուլկարերէն լեզուներով:

Բաժանորդագրին տարեկան 10 ֆր. Պուլկարիոյ և 12 ֆր. արտատպարանի համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Իրաւունք» յունվարի սկիզբէն պիտի հրատարակուի չորսամբ երկու անգամ և աւելի մեծ ծաւալով, մէկ մասը պուլկարերէն, միւսը հայերէն: Հայերէն մասին պարունակութիւնը գրիթէ պիտի հաւասարի թերթին այժմեան ծաւալին չորս երեսներուն:

Պուլկարերէն մասը առաւելագէս պիտի նուիրուի Մակեդոնիոյ շահերուն և իրաւունքներուն պաշտպանութեան, մինչ հայերէն մասը պիտի ունենայ այն ուղղութիւնը և սկզբունքները որոնց հետևած ենք թերթին հիմնարկութենէն մինչև այսօր:

Հայաստան և Մակեդոնիոյ Արևելեան խնդրոյն զլիաւոր ճիւղերն են, և անոնց շահերուն պաշտպանութիւնը միեւնոյն օականին մէջ կը նշանակէ զատ ուժեղ միացումը միեւնոյն թշնամի բռնապետութեան դէմ աւելի զօրեղ պայքար մը մղելու համար:

Պուլկարերէն մասին խմբագրութիւնը յօժարեցաւ ստանձնել քաղաքիս հանրաժանօթ փաստաբան, հայասէր Տիար Բէթըր Տրակուէֆ, նախագահ Սրբանձա յեղափոխական ընկերութեան կիզը վարչութեան և նախկին խմբագիր Սրբանձա և ուրիշ թերթերու որոնցմով միշտ եռանդուն և ճարտար գրիչով մը տասը տարիէ ի վեր պաշտպանած է թուրք լուծին տակ հեծող քրիստոնեայ ժողովուրդներու արգար գոտը:

Լիայոյս ենք որ այս նոր կարգադրութիւնը գոհունակութեամբ պիտի ողջունուի իրաւունքի բոլոր ընթերցողներէն և պիտի նպաստէ յառաջիկայ տարեշրջանին մէջ զգալագէս աճման այն համակրութեան զոր ցարդ մեր թերթը վայելեց Պատ. հասարակութեան կողմէն:

Յառաջիկայ տարին իրաւունք պիտի զրկուի միայն մեր այն բաժանորդներուն որոնք ընթացիկ տարւոյ բաժանորդագրինը վրձարած են: Տարեկան բաժնորդագրինը պիտի ըլլայ 10 ֆրանք Պուլկարիոյ և 12 ֆր. արտատպարանի համար: Ով որ նոր տարեշրջանի երեք թիւերը կ'ընդունի եւ ետ չի դարձնիր, բաժանորդ պիտի նրկատուի:

Այս կարգադրութիւնը տպարանական և այլ պատրաստութեանց համար ժամանակ և աշխատութիւն պահանջող ձեռնարկ մը ըլլալով, ստիպուած ենք իրաւունքի ներկայ 95. թիւով փակել մեր Գ. տարեշրջանը, որպէսզի կարելի ըլլայ մինչեւ յունվարի ըսկիզբը լոյս ընծայել Դ. տարեշրջանի առաջին թիւը:

Արտատպարանի հայութեան համակրութեան և քաջակերութեան վրայ վստահ՝ գոհ արտով կը թեւակոխենք նոր տարւոյն մէջ, ուր կը յուսանք թէ նոր աշխատակիցներու և թղթակիցներու օժանդակութեամբ պիտի յաջողինք աւելի օգտակար ու շահեկան ընել թերթին պարունակութիւնը և աւելի լաւ ծառայել ժողովուրդին շահերուն ինչ որ մեր զլիաւոր նպատակը և գերագոյն իղձն է:

Խմբագրութիւն

ДЕКЛАРАЦИЯ.

В. „Иравункъ“ („Право“) е единъ отъ ония симпатични вѣстници на измѣненитѣ арменци, койго съ рѣдка рѣшителность и твърда непоколебимостъ е отстоявалъ правата на своѣта народность. Той съ умѣение и тактичность е ръководилъ арменското обществено мнѣние, до като е имало една чувствителна празнота отъ такива сжщо събратия. Нѣма съмнѣние, че това му придоби симпатиятъ на всичкитѣ живущи въ България арменци, а сжщо и на единъ голѣмъ дялъ отъ българската интелгенция.

За да даде дестѣпенъ материялъ обаче и за българското читающе общество, на което нравственнитѣ интереси, въ борбата сръщу неправдитѣ въ Турция, сж тождественни, редакцията на тоя органъ е турила намѣрение да осжществи и друга една, още по симпатична за българското общество, идея: да уполъзми формата на вѣстника си и да започне издаванието му на двата язики — българский и арменский.

По този поводъ, имахъ честѣта да получа отъ редакцията на реченный вѣстникъ покана да взема и азъ участие въ списванието на българския текстъ. Велегласно исповѣдвамъ, че азъ съмъ считалъ нравственнитѣ интереси на арменцитѣ и българитѣ еднакво священи и толкова тождественни колкото и между одринцитѣ и македонцитѣ. Азъ мисля, че само съ группиранието на всички борящи се елементи, които въ купъ да правятъ отпоръ на злото, ще е възможно да се дочака едно честито разрѣшавание на Источния въпросъ. Дѣлимъ ли се; на разни страни ли теглимъ — ще бждемъ слаби. Слаби ли сме — никакво въздѣйствиe не можемъ направити на тиранина, нито на дипломацията. И нашитѣ огнетени народи ще бждатъ боязливи и неподвижни.

Само заради това азъ приемамъ съучастието въ списванието на „Иравункъ“ и, колкото силитѣ ми помагатъ, ще работя въ попришето на доброто дѣло, съ което е нагърбенъ този органъ.

П. Драгулевъ.

ՊԱՏԻԺԸ

ԳՐՈՂՆԵՐՈՒՆ ԴԵՍ

Հին ատենները ուր դեռ միայն հեծան բռնապետութիւնը իր լուծին տակ անպայման կը ճընշէր ընդհանուր գերի-մարդկութիւնը, բարբարոս այդ շրջանին մէջ, գերականութիւնը պարզապէս մասնաւորներու առանձնահատկութիւնն էր, լայն արուեստակութիւնը՝ կղերի և մեծատունի լծացած մտքերուն։ Այնուհետեւ աշխարհի մէջ ընդունելութիւն կը գտնէին միայն այն գրողները որոնց շնթող լեզուն կը նպաստէր ամրապնդելու սոսկ բոլոր այն կանխակալ կարծիքները, այլանդակ վերացականութիւնները որ հիմը կը կազմէին այդ նսեմ դարերու քմածին օրէնքներուն։

Այս օրերու մատենագիրները՝ խորհրդաւոր պատերու մէջ փակուած, տոհմիկ իշխանաւորներու շրջանակէն դուրս աշխարհ չէին ճանչնար, նուաստութիւն կը սեպէին չփում ունենալ ամբողջին հետ որ այբուբենը անգամ ճանչնայու միւլթարութիւնէն դուրս, կը փտտէր իր միտքը ճշմոյ խաւարի կուռ շղթային ներքեւ։

Գրողներու միակ իտէականն էր փառք մը մուրալ, մեծամեծներու մէջ շնորհքը՝ ձեռք ձգել, անարգ շնորհք մը որուն հասնելու համար անվիր յոռիք կը մրտէին, անճոռնի ազատութիւններով մարել, փճացնել կուգէին այն լուսագոյն ձգտումները, որոնք՝ իրականաւորով՝ ազգերու ճակատագրին կարող են տալ մարդկութեան կուշումին արժանի ուղղութիւն մը։

Ոչ ոք կրնար փորձ մը ընել հրապարակ նետելու տիրող տարրի անամթ զգացումները, աներկիւղ ասպարէզ գալու, կռիւ

մղելու, բոլոր ուժով պաշտպանելու հարստահարուած, տանջուած հասարակութեան անկապտելի իրաւունքները։ Վասն զի կղերը, քստմնելի ոճիրներու բազմազուլի հիարան, մարդկութեան ողորմելի այդ վիճակին մէջ, դիւրութեամբ կը յաջողէր անյուր տանջանքներուն ներքեւ անմիջապէս խեղդել այն վեհ ձայնը որ հազիւ դուրս կը թռէր ճշմարիտ խորհրդի մը մարդասէր բերնէն։

Պաշտականներու մարդախոշոր դահիճներն ալ անգործ չէին մնար. աղեկեզ հեծեծութիւններու մէջ հիշտուութեամբ կողջակեղէին ճշմարտութիւնը. մինչեւ որ վերջապէս երեւցան վալթերներ, Տիտերոններ որոնց հրաշքի տողերու սարսուղ ազդեցութեան տակ զղրդիլ սկստու կաթոլիկ եկեղեցականութիւնը, և իրենց զգուշի գոյնը դուրս տանին մարդկային արժանապատուութիւնը սպաննող ժամանակակից ապականութիւնները։

Հինին ու նորին, ստրկութեան ու ողջմտութեան մէջ խրամաւոր բացուցեցաւ։ Գաղափարի մարտիչները, խիզախ ու անկեղծ, մենամարտութեան ձեռնոցը նետեցին հարստահարիչ դասակարգի անամթ երեսին։

Գրչի մարդը ժողովուրդներու ինքնաճանաչութիւնը քարոզել ըսկտաւ և անհաշտ ատելութիւն մը տարածեց դէպի բռնութիւնը, դէպի աւանդական խաբեւայ սեռոտի ապաշտութիւնները։

Կամաց կամաց իբրեւ մարդ տարբերու անհրաժեշտութեան դիտակցութիւնը իր արմատները նետեց լուին հպատակութեան վարժուած ժողովուրդի տանջուած սրտին մէջ։

Յեղափոխութեան կայծեր բռնուղեկեցան, մեծ սկզբունքներու յաղթանակին համար ժողովուրդը զինուեցաւ ու վերջապէս Յուան սական մաքուր արիւնի հեղեղէն

դուրս եկան նոր իրաւունքներ, նոր կեանք, նոր ըմբռնումներ։

«Ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան» հետ մասնաւոր ազատութիւնն ալ մեծաձայն հռչակուեցաւ։

Մեծ յեղափոխութիւնը իր գրիթէ տիեզերական ազդեցութիւնը ունեցաւ։ Եւ այսօր քաղաքակիրթ աշխարհի բոլոր լուսաւորեալ կեդրոններուն մէջ, սկզբունքով ընդունուած է գրիւղ ազատութիւնը։

Յայնց ճնշումը դադարած չէ, հալածանքի ձեւը միայն փոխուած է։ Ազատ, սահմանադրական երկիրներու մէջ, զրոյր չեն կախարայլեւս, խարոյկ չի կայ, ինտէքսի ախանջ դնող միտքած չէ սակայն սպառնալիք կայ ու կը մնայ։

Անոնք որ արդարութիւնը, անկեղծ համոզում մը, ազատ գաղափար մը կը յայտնեն, կը տեսնեն որ իրենց դէմ տնկուած ունին մեծամեծներու խումբ մը, ու մինչև իսկ կատաղի ամբողջ, ժողովուրդը դեռ ամեն կողմ հալածիչը կը դառնայ նոյն իսկ այն մտածողներուն ու գրողներուն որոնք իր շահերը կը պաշտպանեն։

Ձօլայի գործը ամենէն թարմ, ամենէն ըմբոստացուցիչ օրինակն է մեր աչքին առջեւ։ Միայն մնաց որ մարդը իր պատուական կեանքը վրայ տար։

Հանրային կեանք մը ապրողներուն, պատիկ ընդվզում մը ցուցնող գործաւորներուն ու մանաւանդ ազատ ու անկաշկանգ գրողներուն դէմ հիմայ նոր պատիժ մը կը գործածէ տիրող ունեւոր դասակարգը, որուն պիղծ ձեռքին մէջ հլու գործիք մըն է դժբաղդաբար ամբողջը։ — Անթի թողու, զրկանքի մատնել։ Ահաւասիկ դարուս մեծատուններուն ի գործ դրած շնական սպառնալիքը որուն առջեւ, ափսոս, կամու կամ

ստիպուած, կը խոնարհին գրեթէ բոլոր անժառանգները։

Ասոր համար է որ շատ հազուադէպ է գտնել թերթ մը որուն էջերը լայնօրէն բացուած ըլլան անկախ, անշահախնդիր գրուածքներուն համար։ Երբեք թերթիւն, կողմնակալութիւն կը վխտան ամեն տեղ։

Պատիժի այս դարավերջիկ դրութիւնը մեր մէջ ալ ընդունուած է իր բոլոր տխմար ճիւղերով։

Կտրիք մըն է կը յայտնես, մեծամուժ մըն է մէջ տեղ կը նետես, համոզմամբ և առանց ստոր հաշիւներու։ Եւ ահա անոնք՝ որոնց շահը կը պահանջէր ապականուած տեսութեան մը մէջ պահել հասարակութիւնը, մոլորին մէջ կը յարձակին վրադ, և իրենց վրէժը լուծելու միակ ճամբան կը նկատեն նիւթական միտք մը հասցնել քեզի։ Դիւական հրճուածք մը, ճիւղային հաճոյք մը կը զգան իթէ գործի խանգարեն։ Դատել, քննել, փաստել, ըստծոյ ջրի չի կայ ըստաւ։ Կը հասկնամ որ հասարակութիւնը բացարձակ իրաւունք ունի հսկելու իր գրողներուն վրայ և ինչ չի տալու ըստ որ ցած հոգի աւրարածներ իր միտքը մոլորեցնեն և ընհանուրին բարոյականը ապականեն։

Շատ արդար է որ ժողովուրդը խստապահանջ ըլլայ, բողոքէ և մինչև իսկ արհամարհանքով մէկ դի նետէ բոլոր այն գրուածքները որոնց մէջ նենգատնութիւնը, շահագիտութիւնը իրենց մեծկան ու խայտառակ դերը կը խաղան։

Սակայն մեր մտքի աղքատութիւնը ցոյց տուած կըլլանք պարզապէս, երբ ողորմելի միջոցներով տիրացուական հակառակութեամբ հալածել փորձենք այն մարդիկը որոնք մեզմէ տարբեր կը մտածեն ու կը գրեն։

Ասիկա խղճի բռնաբարում, բարբարոսութիւն է մէկ խօսքով։

ՎԱՀԱՆ ԵԱՅՐՈՍԱՆ

ԸՆԴԱՆՈՒՐ

ԶԻՆԱԹԱՓՈԻԹԵԱՆ

ՀԱՍՐԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ

(Դ.)

(6)

Այսպէս ուրեմն, ինչպէս քննադատապէս կը կարծուի, Արդաւ Լուսինի հարցը չէ միայն պատճառ քննադատութեան, այս աղէտի և այս միայնութեան փաստի ամենաստույգ և ամենազօրեւոր պատճառն է՝ օսմանեան կայսրութիւնը, որ կախած է Եւրոպայի գլխուն վրայ՝ Դամոկլեան սուրի մը նման՝ այն Արեւելեան հարցն։

Ուրիշ մեծ հարց մ'ալ եթէ կայ՝ թրքական կառավարութեան հպատակող ժողովուրդներու ունեցած ժառանգական իրաւանց հ'տ պահանջութիւնն և անոնց վերածնունդի տեսլալն է, որոնք այսպէս ստեղծով՝ այժմ դատապարտուած են գերութեան։

Ճշմարիտ հարցն, ուրեմն, Թուրքիոյ բաժանման հարցն է։

Այս պատճառաւ ոչ ոք իրաւունք պիտի ունենայ զմեզ պարտաւելով ասել, թէ մենք այս պրօշխորի հրատարակութեամբ կ'օւղենք յարուցանել Թուր-

քիոյ բաժանման նոր հարց մը։ Այս հարցը ծագում առած է Մեծն Պետրոսի ժամանակէն՝ որ ասին արդէն գոյութիւն կ'ունենար այն և որը այս դարի մէջ, մասնաւորապէս պարզ և բնական հարց մը եղած է ամեն ուղղամիտ մարդու համար։

Ոչ ալ մի նոր խաչակրութիւն է այն զոր կուգենք քարոզել, այլ պարզապէս եւրոպական քաղաքակրթիչ զաշնակցութիւն մը։ Առաջարկութիւն մը, ծրագիր մ'է՝ այն զոր կը յանձնենք ամենուրեք ու շաղկապեալ Եւրոպայի ամեն կողմէ պաշարող մօտալուտ վտանգներէ ազատելու նպատակաւ։

Չի կայ այս բանի մէջ նախ և Մանիկի մի հարց։ Կրօնի և ազգութեան հարցն առաջ կայ մարդկութեան, յառաջդիմութեան և ընկերական տնտեսութեան հարցն, որ կը հարկադրէ լուսաւորեալ աշխարհը՝ վերցնել մթութեան այս կառավարութիւնը, ջնջել այս ամօթի Եւրոպայի երեսէն և փորձել վերջապէս միանգամ ընդ միշտ լուծել զորոհան այս հանգոյցն։ Ժամանակ է այս եւրոպական դուրս քաշել Եւրոպայի սրտէն, ըստ է կ'ըստը, որ ընդունաւ քաղաքացիական պատերազմը և քաղաքացիական պատերազմը։

Ե.

Այս գործի յաջողութիւնը ապահովե-

լու համար՝ քաղաքակրթեալ դարուս մէջ կանգնուելիք այս ամենափայլուն յաղթանակին համար, բոլոր մեծ տէրութեանց միաբանութիւնն հարկաւոր է, որ սակայն ամենազօրեւորին կէտն ալ է։

Օսմանեան կայսրութեան քայքայման վիճակն՝ իր վատթարութիւնն և բարբարոսութիւնն այն աստիճան բացայայտ են, որ պէտք չը կայ անուշա համոզելու այս մասին ժողովուրդներն և կառավարողներն։ Ոչ ալ մեծ պատերազմի և ահագին զոհողութեանց պէտք կայ՝ մեր առաջարկած նպատակին հասնելու համար։ Միայն եւ զաշնակցեալ Եւրոպայի կամքն զայն կրնայ ընդունել տալ ընդհանուր թըշնամոյն, և իրեն պարզ հրամանով մը ձգել տալ անմիջապէս զէնքերն՝ զինք մղելով նշանակուելիք տեղը և ներփակելով նախագծուելիք շրջանակին մէջ։

Ամենամանր և ամենազգիտաւոր հարցը բաժանումի որոշման և զայն սկսելու եղանակի հարցն է։

Հոս մեր ծրագրէն և մեր նպատակէն դուրս է՝ մտնել այս բաժանման մասնաւորութեան մէջ, և այս առթիւ ըստ երեւոյթի փշալից հարցին նկատմամբ գծել աշխարհագրական մասնաւոր քարտէզ մը։

Օսմանեան կայսրութիւնն այնքան ընդարձակ է որ՝ հպատակող ժողովուրդոց օրինաւոր իղձերուն հաւանքէ և անոնց իւրաքանչիւրին իրաւամբ պատկանող ժառանգութեան մասն ալ տալէ վերջ՝ պիտի մնան դեռ այնքան երկիրներ, զորս մեծ տէրութիւնը պիտի իւրացնեն միմեանց փոխադարձ պատերազմներուն և շահերուն համամասն։

Երբ թուրքեր սահմանի մը մէջ պիտի փակուին և տեղաւորուին՝ իրենց աւերութեան հետ յարաբերութեան մէջ գտնուող կացութեան մը մէջ, հաւանական է որ՝ ցարդ անսաստ եղած այս ժողովուրդը քիչ քիչ պիտի համակերպի յառաջդիմութեան և քաղաքակրթութեան պայմաններուն, և այսպէսով պիտի ենթարկուի կատարեալ վերածնութեան մը։

Ապականուած կառավարութեան տակ գտնուող այս ժողովուրդն՝ որ միմիայն ապրած է դիպուածական շահերով և միշտ փախած է ամէն աշխատութենէ, այս ծոյր, վատնող, երեսպաշտ և կեղեքող ժողովուրդն՝ ապրելու վարժուած առաջակութեան և յաջողութեան հասցնով և ցարդ անձնատուր եղած ամենակերպ կաշառքներու և մոլորութիւններու, կ'ասենք որ՝ այս ժողովուրդը զինք չընապատելիք քաղաքա-

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Քէօստէճէյէ 4 դեկտ. թուականի մեզ ուղղուած թղթակցութիւնէ մը կը տեղեկանանք թէ՛ նոյն քաղ. քի Ազգ. վարժարանաց ինպատակ շքեղ թատերական ներկայացում մը տրուած է Նոյեմբ. 26ին «Վէսէյօ» հայ խումբին կողմէ. դերասանք յաջողութեամբ փայլած են բեմին վրայ, հանդիսականք գոհ մնացած են. և թաղ. խորհրդոյ կողմէ այս փոթիւ Օր. Քընարին նուիրուած է ազամանդեայ գեղատեսիլ կիսամահիկ մը: Թըղթակիցը մեզ այս տեղեկութիւնն երբ հաղորդելով կը յաւելու.

«Գոհութեամբ կը տեղեկանանք թէ՛ ներկայացման հասոյթը եղած է 1300 ֆութը, գումար մը որ Քէօստէճէյի համար կրնայ նշանակելի համարուիլ: Յիշեմք այս առթիւ թէ՛ քաղաքիս հայերը մէկ տարիէ ի վեր զուրկ մնացած են ազգային վարժարանէ, զի վարժարանի նախկին փայտաշէն շէնքը թէ՛ հին և թէ՛ հոսի ըլլալով վարժարան նկատուելու հանգամանքներէ, տեղական կառավարութեան կողմանէ յետ բազում ազդարարութեանց վերջապէս փակուած էր: Թաղ. խորհուրդը զայն ի նորոյ կառուցանելէ ուրիշ միջոց չունենալով, յունիս ամսոյ մէջ ձեռնարկեց քարուկիր վարժարանի մը շինութեան:

«Աւելորդ է ըսել թէ՛ գրամական մեծ տաքնապնդը անցուց և դեռ անձկութեան մէջ է, զի ըստ մեր տեղեկութեան տակաւին 8/10 հազար ֆրանքի պէտք մը կայ:

«Թաղ. խորհուրդը որքան ալ փութաշնորհ լինի ցոյց տայ իւր ծանր ձեռնարկին մէջ, դարձեալ Քէօստէճէյի և շրջակայ գիւղօրէից ազգայինք պարտին ձեռնտու ըլլալ անոր՝ շինութենէ գոյացած

կրթութեան չնորհիւ, թերեւս պիտի կրնայ վերականգնիլ իսպառ փոխելով իր կառավարական, ընտանեկան, ընկերական և անասական պակասութիւններէն, որով և ատակ պիտի լինի քաղաքակրթութեան և առաջընթացութեան, և պիտի բռնէ թերեւս պատուաւոր մի տեղ մարդկային գերաւորութեան մէջ:

Իսկ այդ անփութիւն է որ՝ սր գովասանած միաբանութիւնն և մեր առաջարկած բաժանումը մարդասիրական և քաղաքակրթական արդիւնքներ առաջ պիտի բերեն, որոնք մարդկութեան համար բարիք մը պիտի լինին բնականապէս, նախապէս ազատելով եւրոպան (զգալի ժամանակամիջոցի մը համար) այս միայնակ վտանգէն, և այս անվերջ գոհացութիւններէն՝ որոնք մանաւանդ կը պատճառեն այն սոսկալի և անսահման զինուորներն, երկրորդապէս գտնելով մի հնարք՝ տեղաւորելու և զբաղեցնելու համար աշխատողներու այս չափազանցութիւնն, որով կրտառապի եւրոպան, չափազանցութիւն մը որ յառաջացած է բնակիչներու անցուն յաւելումէն և սահմաններու սեղմութենէն. չափազանցութիւն մը որ ճակատագրապէս առաջ բերաւ բանուրական և ընկերվարական հարցերն,

պորտքը բառնալու համար, որպէս զի Կործի գլուխ գտնուող անձինք՝ անգամ մը պարտքը թոյլատրելով իրենց վրայէն, միջոց ունենան վարժարանի ներքին բարեկարգութեան մը զբաղելու:

«Առ ինչ կը ծառայէ վարժարանի մը չոր շէնքը եթէ չենք գրտներ հոն ինչ որ կը բաղձանք: Այսօր Քէօստէճէյի ազգայինք անշուշտ կը պարծին թէ Սեւ ծովու ափանց վրայ հոյակապ հսկայ վարժարան մը կառուցած են: Սակայն ա՛յն ատեն իրաւամբ պէտք է պարծին երբ այդ վարժարանը կարող ըլլայ իւրաքանչիւր տարի ազգին ներկայացնել ուսուս և զարգացնող պատանիներ, բարեկիրթ օրիորդներ՝ օժտեալ ազգային լուրջ դաստիարակութեամբ:

«Պէտք է այս ամենը պահանջել թաղական խորհրդէն, բայց պէտք է նախ տալ որպէս զի իրաւունք ունենանք պահանջելու: Եթէ իւրաքանչիւր ազգային անհատ իւր առ ազգն ունեցած պարտականութիւնը ճանչնայ իւր կարողութեան համեմատ, ազգային գործերը բընաւ երեսի վրայ չ'են մնար. ուրեմն պէտք է օգնել մեր կարօտեալ ազգին և միշտ օգնել. նա մանաւանդ վարժարանաց:»

ԼՐԱՔԱՂ

—Ֆիլիպէն դեկտ. 4 թուով կը գրեն թէ յառաջիկայ շաբթու Գեր. Տ. Գէորգ եպիս. Իսթիւնեան Ֆիլիպէ պիտի ժամանէ:

—Ամերիկայի ազգայնոց մէջ Զէյթունի ինպատակ հանգանակութեան գործը կը շարունակուի: Անցեալ օր Պոսթօնի Նոյմըն փողոցի ճաշարանին մէջ ճաշարանագետի թեկադրութեամբ՝ 46 աղաք հանգանակուելու է, և հինգ անձնիք Յանձնախումբ մ'ալ կազմուել է հանգանակութիւնը շարունակելու համար:

Ուստրի մէջ Զէյթունի ինպատակ

որոնք օր ըստ օրէ երթալով ծանր կերպարանք մը կ'առնեն: Այսպէս կատարելով իւրաքանչիւր կառավարութիւն պիտի կրնար երկարատեւ ժամանակամիջոցի մը համար Թուրքիոյ մէջ փոխադրել իր բնակիչներու աւելցածը՝ իւրացնելիք երկիրներու մէջ զաղթականութիւններ հաստատելով: Գաղթականք այնտեղ պիտի գտնեն, այսպէս ասելով՝ իրենց հայրենեաց և ընտանեաց մօտ աշխատութեան ընդարձակ դաշտ մը, ամենաբարձր հողի մը և նամանաւանդ, իրենց ծննդավայրէն աւելի առողջարար կլիմայ մը. այնտեղ, նամանաւանդ հազիւր անգամ աւելի երջանիկ պիտի լինին քան թէ ուրիշ հեռու երկիրներ երթալով՝ այնքան անտանելի որքան վատառողջ կլիմաներու տակ՝ ինչպէս են Ափրիկէի անապատները, Ուկրաինայի մէկ կողմ մը. նացած կզգիներն կամ աշխարհիս ծայրագոյն երկրներն, ուր ո՛չ միայն զաղթականք՝ այլև կառավարութիւնները կը հանդիպին այնքան անյաղթելի զրգուտարութեանց:

Չարհամարնի կէտ մ'ալ եթէ կայ, այն է թէ եւրոպայի գարիթալիսիները պիտի գտնեն իրենց գրամազրուխտութեան համար ընդարձակ և արդիւնաւոր գործառնութեան դաշտ մը, վարժ բան-

եղած ներկայացումէն և հանգանակութեան քոյացիք է 100 տղար, զոր ընդհանուր Գանձագետին պիտի գրկեն: Ընդհանուր Գանձագետը ցարդ ստացած է մօտ 400 տղար. բայց դեռ չատքաղաքներ չեն զրկած իրենց հաւաքած գումարները:

Փրովիտէնէ կը գրեն թէ՛ հանգանակութեան արդիւնքը 300 տղարի չը պիտի կրնան հասցնել, վասնզի Սարաճեան սրբազան 243 տղար հանգանակելով Ս. Փրկիչ եկեղեցիին համար՝ Զէյթունի հանգանակութեան կերպով մը փաստած է եղեր:

—Անցեալ շաբթու Իրաւունքի միջոցաւ հարցում մը ուղղած էինք Պատ. Ամիրխանեանցի թէ՛ ստոյգ է որ իր անօրինութեան և մատակարարութեան տակ գտնուող վարժարանէն կամ ապաստանարանէն, ուր 20 է աւելի հայ մանուկներ կ'ուսանին, արտաքսած է ազգային պատմութեան դասը:

Մեր այս հարցումին պատասխան տալ չի բարեհաճեցաւ յիշեալ պատմութիւն, որովհետեւ տալիք պատասխանը մեր իմացածին հաստատութիւնը պիտի ըլլար. ուստի մէնք իր լուծութենէն և մեզ հասած հաստատ տեղեկութիւններէն յամոզուած ենք թէ Պատ. Ամիրխանեանց իրօք ազգ. պատմութիւնը արտաքսած է իր այդ հաստատութիւնէն. հետեւաբար կրնանք ըսել թէ բոլորականութիւնը հայ մանուկները իրեն և այդ դաստիարակել չուզեր:

Յառաջիկային կը դառնանք այս խնդրոյն:

—Սօֆիայի սրճագործ ազգայինները տարի մը առաջ իրենց մէջ համաձայնութիւն գոյացնելով, արհեստակցական հակառակութիւնները իսպառ ջնջելու համար ընկերութիւն մը կազմած էին: Այժմ այդ ազգայիններէն ոմանք մեզ կը տեղեկագրեն թէ՛ ընկերութեան գանձագետը առանց մէկու մը հաշիւ տալու մեկնած է. իսկ Աստեապետը՝ հակառակ անդամոց պահանջներուն չի հաճիր ժողով գումարել և ընկերութեան գործառնութիւնները ու հաշիւները ներկայացնել: Այս պատճառաւ անդամներէն ոմանք խնդիրը կառավարութեան յանձնել կը միտին եղեր:

—Փարբերգի Հուլէ գիւղի Տ. Գէորգ քահանայ, առանց գիտութեան առաջնորդարանի զաղտագողի պատկած է իշխանեան Ըարապետ իր եղբօր այրի կնկան հետ: Առաջնորդը քահանան

ւորներէ և արհեստաւորէ կազմուելիք այս զաղթականներուն միջոցաւ և անոնց ներշնչելիք լիւրի ապահովութեանը և վստահութեանը շնորհիւ. այժմեան տիւրը Թուրքիան կազմող այս երկրներն, կարճ ժամանակամիջոցի մէջ պիտի կրնան այս կերպով զիւրութեամբ մը փոխակերպուել մէկ ծայրէն միւս ծայրը. մինչդեռ այժմու թրքական կառավարութեան տակ, նոյն իսկ հաղար տարիներէ ետք՝ այս գեղեցիկ և բերրի երկիրները զատապարտուած կը մնան ամլութեան և իրենց ատակ և աշխատասէր բնակիչները կը մատնուին անյոյրժութեան և թշուառութեան:

Վերջապէս գերութեան, անիշխանութեան, աւերակներու և սուգի այս երկիրը պիտի փոխակերպուի, և իրաւամբ պիտի կրնայ անմիջապէս մասնակցիլ քաղաքակրթեալ եւրոպային. և առաջընթացութեան, լուսոյ աշխարհը միանգամ ընդ միշտ գերծ պիտի մնայ թաթարներու և Մօնղոլներու նորագոյն ձէնկիւղ-խաներու կամ Թիմուրէնիներու և ամենախիւղ Օսմաններու աւերիչ արշաւանքներէն:

Ակաթի

ՎԵՐՁ

Ի Լ Ա Ն

Յունվարտան իթիպարէն իրաւունք գրթասը պէօյիւք վէ թէքըար հաթթատա իքի տէֆա էրմէ. նիճէ վէ պուլկարճա նէշը օլընաւազ, վէ էրմէնիճէ գըսմը էվվէլքինտէն բէք նօգսան օլմայաճազ տըր:

Պուլկարճասը տախի զիյատէսի իլէ Մաքէթմնիւս վէ էրմէնիսթան մէսէլէլէրի իլէ մէշուլ օլուպ, շուիքի միլլէթին հուգուգընը մուհաֆաղա իտէճէք տիր: Պինաէն ալէյ հաշմանը ամօ օլան զատտար հիւքիմէթէ գարշը հազգըմըզը մուհաֆաղա իտէպիլմէք իշիւն էրմէնի վէ Պուլկար միլլէթլէրին էֆքեար ու գուվէթլէրի պերլէշմէկէ կազէթամըզ պիր վասըթա օլաճազ տըր:

Պուլկարճա գըսմընըն մուհաւրիլիլին էրմէնիբէրվէր մէշհուր ալօզաթ կօսրօտին Բէթր Տրա. կուլէֆ տէրէօհտէ իթմիշ տիր. պուզաթ «Սլթրանճա» նամ մուաղգամ պուլկար գօմիթէնին մէքքէզի րէյիսի օլուպ, Սրաւնճա վէ սաիր կազէթալարընտա օն սէնէտէն պէրուքէնտի մուէսսիր գալէմի իլէ թիւք մէզալիմի ալթընտա էգիլէն խրիսթիյան միլլէթլէրին հազաւընը մուհաֆաղա էյլէմիշ տիր:

Կազէթամըզըն էրմէնի վէ թիւք լիսանլարընտա օլան գըսմը տախի էվվէլքինտէն նօգսան օլմայաճազը կիպի, տահա միւքէմմէլ վէ օգու. յանլարըմըզա տահա ֆոյիտէլի սուրէթտէ տէվամ իտէճէք տիր:

Պինապէրին՝ ապօնէլէրիմիդ եէնի սէնէտէն սօնրա տահա պէօյիւք պիր կազէթա գապուլ իթմիշ օլմազլէ պէրապէր, ապօնէ պէտէլինի տահա ազ էօտէյէճէքլէր. հանի Պուլկարիա իշիւն սէնէվի 10 ֆրանք, խարիճ իշիւն 12 ֆրանք:

Թարաֆըմըզտան իպրազ օլընան շու ֆէտաքեարըզա մուգապիլ մէմուլ իտէրիլքի, էհալինին պուկիւնէ գատար կազէթամըզ կէօսթէրմիշ օլտըզը հիւսնի թէվէտ.

ճուհ տահա զիտտէ արթաճազ տըր: Պուլկարիա խարիճինտէ պուլընան ապօնէլէրիմիդ կազէթամըզըն պուլկարճա գըսմընտան շախսէն իսթիֆատէ իտէմէյէճէքլէր իտէտէ, էրմէնիճէսի էվվէլքինտէն բէք նօգսան օլմայաճազընտան, պուլէտապիրիմիդ անլէրին տախի մէմուլէնիլներու և ամենախիւղ Օսմաններու աւերիչ արշաւանքներէն:

Շու եէնի թէշէպպիւսիմիլին իճրասը իշիւն պիր թազըմ հա.



